377
4-21

22825

377
4-21

010

377 ub
4-21

316

377
4-21

2002

ԿԱՆՈՆՆԵՐ

ՇՈՒՇՈՒԱՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

I. ՊՈՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ա. Հոգաբարձական ընտրութեան մասնակցում են Շուշի քաղաքի բոլոր եկեղեցիների ծխականներն իրանց եկեղեցում կայացած ժողովի մէջ։

Ծանօթ. Ծխական համարւում են բացի ընտիկներից և նրանք, որոնք ոչ պակաս քան երկու տարի վերաբնակուել են քաղաքումս և մտել որ և է եկեղեցու ծխականների շարքը։

Բ. Ընտրութեան մասնակցում է իւրաքանչիւր ծխից միայն մէկ անդամ։

Ծանօթ. 1. Ընտրութեան մասնակցողը պէտք է լինի ոչ պակաս քան 21 տարեկան։

2. Ընտրութեան չեն կարող մասնակցել և ընտրուել քահանաները և Թեմական Դպրանոցի ուսուցիչները։

Գ. Ընտրութեանը նախագահում է իւրաքանչիւր եկեղեցում Կոնսիստորիայից նշանակուած քահանան։

Դ. Ընտրութիւնը կայացած կը համարուի առաջին անդամ, եթէ ներկայ է քաղաքումս գտնուած ծխականների $^1/_3$ մասը. հակառակ դէպքում ընտրութիւնը յետաձգւում է *ռռթ օրով*, երկրորդ անդամ կը կայանայ ընտրութիւնը, եթէ ներկայ է ծխականների $^1/_5$ մասը, իսկ եթէ սահմանեալ թիւը չը լինի, յետաձգւում է դարձեալ *ռռթ օրով*, երբ ընտրութեան ժամանակ ներկայ եղողների սահմանեալ թիւ չէ պահանջւում։

Ծանօթ. Երկրորդ և երրորդ ընտրութեան ժամանակ պէտք է պահպանել Ա. և Բ. յօդուած. իմաստը։

Ե. Կայացած ժողովում նախագահը ժողովը բանալով յոտնկայս կարդում է ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ հոգաբարձական ընտրութեան մասին յանուն Կոնսիստորիայի ուղարկած Կոնդակի պատճէնը և Կոնսիստորիայի իրան գրած հրամանը, ու ձեռնարկում է ընտրութեան հետևեալ կերպով.

1. Ծխականները բաց քուէարկութեամբ ընտրում են երկու գրագէտ մարդիկ, որոնք անդրագէտների ցանկութեան համեմատ պէտք է գրեն նրանց ընտրելիների անունները թերթիկների վրայ։

2. Ներկայ եղողներին համարում և ցուցակագրում են, յանձնելով իւրաքանչիւրին նախագահի ստորագրութիւնը կրող մի մի թերթ։

Ծանօթ. Ձայնատուութեան իրաւունք վայելող ուշացածները եթէ մտնում են ընտրելիների անունները գրելիս, իրաւունք ունին թերթ ստանալ և գրել, իսկ եթէ գալիս են այն ժամանակ, երբ թերթիկները ժողոված է, զրկւում են ընտրելի առաջարկելու իրաւունքից։

3. Իւրաքանչիւր եկեղեցու ծխականներ ընտրում են *ռռսռն* պատգամաւոր։

4. Ընտրուած են համարում նրանք, որոնք ներկայ եղող ընտրողների կէսից աւելի ձայն են ստանում։

Ծանօթ. I. պատգամաւոր կարող են ընտրուել և այն ծխականները, որոնք քաղաքումս են, բայց ներկայ չեն ընտրութեան, այն դէպքում միայն, երբ ընտրողները կերաշխաւորեն նորա համաձայնութեան մասին։

II. Եթէ միանգամից բացարձակ առաւելութիւն ստացողներ չը լինին, թոյլ է տրւում կրկնաքուէարկութիւն, եթէ դարձեալ չ'ընտրուեցան, կամ մի քանիսը բաւարար ձայն չը ստացան, ժողովը փակւում է *ռռթ օրով*, երբ կրկին նոյն կարգով կատարւում է ընտրութիւնը։ Երկրորդ ժողովը համարւում է առաջնի շարունակութիւն, ուստի և նախորդ ժողովի որոշումները չեն քանդւում։

5. Ընտրութեան վերջում կազմւում է արձանագրութիւն ընտրութեան հետևանքների մասին, ուր յայանէ յանուանէ նշանակւում են պատգամաւորների անուն ազգանունը և թէ որքան ձայնից որքան սպիտակ և որքան սև քուէ է ստացել։ Արձանագրութեան տակ ստորագրում են նախագահող քահանան և ներկայ գտնուող ձայն ունեցող անձինք։

6. Ընտրութիւնը կը կատարուի կիւրակէ օր, պատարագից անմիջապէս յետոյ, եկեղեցու մէջ։

7. Ընտրութեան ժամանակամիջոցը ծխականներին յայտարարւում է եկեղեցում արած ծանուցումով և նախագահի ստորագրութեամբ տպած առանձին յայտարարութիւններով։

8. Ընտրութեանը կարող են ներկայ լինել և կոդմնակի անձինք, առանց ձայն ունենալու։

9. Ընտրութիւնը անկանոն կը համարուի, եթէ մէկ ծխից մասնակցել են երկու հոգի, եթէ մասնակցել են անչափահասներ և ձայն են տուել ձայնի իրաւունք չունեցողները (տես յօդ. բ. ծ. 2.)

10. Ընտրութեան մասնակցող և կոդմնակի խռովարար անձինքներին երկու անդամ նախագահը զգուշացնելուց յետոյ, եթէ նրանք դարձեալ կը շարունակեն իրանց ակամուն ու խռովութիւնը, նախագահն իրաւունք ունի հեռացնելու ժողովից։

11. Ժողովի ժամանակ չի թույլատրվում բացի ընտրությիններին վերաբերեալ հարցերից՝ շոշափել ուրիշ հարցեր։

12. Եթէ որ և է մէկը ընտրության ժամանակ նկատում է անկանոնություն, իրաւունք ունի գրաւոր կերպով յայտնելու Կոնսիստորիային ընտրության օրից հաշուած չորս օրուայ ընթացքում։ Բողոքելու դէպքում բողոքարկուն պարտաւոր է արձանագրության տակ ստորագրել աւելացնելով, որ առանձին թղթով ասելիք ունի։ Իսկ չորս օրից յետոյ Կոնսիստորիա մտած բողոքները կը մնան առանց հետևանքի։

Զ. Ծխականներից ոմանց բողոքի հիման վրայ կամ Ատեանը իր գիտողություններով, եթէ անկանոն է համարում ընտրությունն ու բեկանում է, նշանակում է նոր ընտրություն փոխելով նախագահին։

Դանող. Նոր նշանակուած ընտրության ժամանակ պահանջվում է վերոյիշեալ կէտերի ճիշտ գործադրությունը։

II. ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ.

Է. Բոլոր եկեղեցիներում պատգամաւորների ընտրությունը վաւերացնելուց յետոյ Կոնսիստորիան նշանակում է պատգամաւորների ժողով Առաջնորդարանի դահլիճում իւր Նախանդամի նախագահությամբ և անդամների ներկայությամբ։

Ը. Պատգամաւորների ժողովը օրինական կը համարուի, եթէ ներկայ է նրանց $^3/_4$ մասը, հակառակ դէպքում ընտրությունը յետաձգվում է մէկ շաբաթով։

Դանող. Բացակայ եղող պատգամաւորները կարող են գրաւոր յայտնել իրանց ընտրելիների անունները, որ հաշուի կառնուի։

Թ. Երկրորդ ժողովը կայացած կը համարուի, եթէ ներկայ է պատգամաւորների $^2/_3$ մասը։

Դանող. Իւրաքանչիւր պատգամաւոր կարող է բացի իր ձայնից ունենալ ևս մի ձայն բացակայ պատգամաւորներից, եթէ վերջինս գրաւոր կերպով այդ մասին կը յայտնի նախագահին։

Ժ. Ընտրվում են վեց հոգաբարձու և չորս անձնափոխանորդ։

Դանող. 1. Ընտրելու իրաւունք ունեն և ոչ պատգամաւորները, եթէ ընտրողները կերաշխաւորեն նրանց համաձայնության մասին։

2. Չեն կարող ընտրուել միայն քահանաները և Թեմական դպրանոցի ուսուցիչները։

ԺԱ. Ընտրուած են համարվում նրանք, որոնք ստանում են ներկայ եղող ձայների $^2/_3$-ը։

Դանող. Նախ կայանում է 6 հոգաբարձուների ընտրությունը, ապա 4 անձնափոխանորդներինը.

ԺԲ. Եթէ առաջին անգամ չը վերջանայ ընտրությունը, հրաւիրվում է երկրորդ ժողով, որը համարվում է առաջնի շարունակությունը։

ԺԳ. Եթէ ընտրության ժամանակ որ և է անկանոնություն նկատուի, բողոքարկուն պարտաւոր է արձանագրության տակ ստորագրել և իր գրաւոր բողոքը յանուն ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ութ օրուայ ընթացքում ներկայացնել Կոնսիստորիային, որպէս զի վերջինս իր գիտողություններով ու բացատրություններով առաջարկի Վեհափառ Կաթուղիկոսին ի տես և ի տնօրէնություն։

ԺԴ. Պատգամաւորներին ժողովի կը հրաւիրի Կոնսիստորիայի Նախանդամը առանձին հրաւիրագրով։

Նախանդամ Կոնսիստորիայի՝ Մատթէոս Վարդապետ

Անդամներ
- Կարապետ քահանայ Տէր-Դանիէլեանց
- Գարեգին աւագ քահանայ Յովհաննիսեանց
- Աղէքսանդր քահանայ Բաղդասարեանց

Կ. Գ. Առնանդպրի Մ. Տէր-Սարգսեանց

Թողարկի տպագրել 7 Մարտի 1899 ամի. Ճուշի։

Նախանդամ Կոնսիստորիայի՝ Մատթէոս Վարդապետ

Հայկական ՍՍՀ Գրքի Պետական Գրադարան
ՀՍՍՌ-ում ՀԿԿ
4526-56
26437-ԿՀ

22825

2013